ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 1-Լ

ԱՐՏԱՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՆՁՆԱՊԵՍ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել, որ՝

1) ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանը պատրաստվում է կտորից՝ ոստիկանության ծառայողի վկայականի բաղկացուցիչ մաս հանդիսացող կրծքանշանի չափով և ձևով,

2) ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանը կրում են արտաքին ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ այն ամրացնելով վերնաշապիկի, բաճկոնի, տարազաբաճկոնի կամ կիսավերարկուի ձախ գրպանի վերին հատվածում կարված կպչունակի վրա:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության կադրային քաղաքականության վարչության պետին՝ սույն հրամանի ընդունումից հետո՝ 10-օրյա ժամկետում, համագործակցելով Հասարակական անվտագության ապահովման գլխավոր վարչության հետ, Տնտեսական վարչություն ներկայացնել արտաքին ծառայությունը որպես հիմնական գործառույթ իրականացնող ոստիկանության ծառայողների թվաքանակը և նրանց անհատապես նույնականացնելու հնարավորություն տվող համարները (ծառայողական վկայականների համարները):

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված տվյալները ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, ապահովել ոստիկանության ծառայողներին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանների պատրաստումը և հատկացումը համապատասխան ծառայողներին:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝ ապահովել ոստիկանության ծառայողներին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշանների պատրաստման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

5. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

« 22 » 01 2021թ.

ք. Երևան